*հավելված 1*

# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Կազմարարական ծառայություններ

**ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/12-14/27 ծածկագրով գնման ընթացակարգի**

| Չ/հ | Ձեռքբերվող Ծառայության նկարագիր | |
|---|---|---|
| Կազմվող գործերի թերթերի առավելագույն չափսը՝ A4 ձևաչափի, կազմինը՝ A4+: A4-ից մեծ թղթեր լինելու դեպքում դրանք ծալվում են, իսկ փոքրի դեպքում՝ կարվում են Պատվիրատուի հետ համաձայնեցված մասում: Մեկ կազմվող գործի թերթերի քանակը՝ 50-ից 500 թերթ: Թերթերը սոսնձվում և ամբողջությամբ կարվում են թելերով: Անհրաժեշտության դեպքում թերթերի վրայի կարված մետաղական լարերը հեռացվում են, իսկ թերթերի չափսերը՝ հավասարեցվում: | | |
| Չ/հ | Տեխնիկական բնութագիր | Նվազագույն քանակը |
| 1 | Կազմը՝ 1.5-ից 2.0մմ հաստությամբ և 1500-ից - 1800 գ/քմ խտությամբ ստվարաթուղթ՝ պատված ոչ շատ վառ գույնի արհեստական կաշվով կամ նման այլ նյութով, անհրաժեշտության դեպքում կողքին կամ դիմերեսին գործի անվանումը՝ համաձայնեցված Պատվիրատուի հետ, ներսից ամբողջությամբ սոսնձված սպիտակ թուղթ: | ***Նախատեսվում է նվազագույնը 180 հատ գործ*** |
| 2 | Կազմը՝ 200-ից 300 գ/ք.մ. խտությամբ կավճապատ թուղթ /տրամադրում է Պատվիրատուն/, կարվող մասում երկու կողմից առնվազն 1.0 մմ հաստությամբ ստվարաթուղթ: | ***Նախատեսվում է նվազագույնը 3000 հատ գործ*** |

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5-րդ աշխատանքային օրը | 2014 թվականի դեկտեմբերի 20-ը: |

- Կատարողը՝ մինչև ծառայությունների մատուցումը, օգտագործվող նյութերը /թել, թուղթ, ստվարաթուղթ, արհեստական կաշի/, ինչպես նաև մեկ կազմի օրինակ ձևավորելուց և պատրաստելուց հետո դրանք համաձայնեցնում է Պատվիրատուի հետ:
- Կատարողը պարտավոր է չհրապարակել Պատվիրատուի կողմից տրամադրված կազմվող նյութերը և պահպանել դրանց գաղտնիությունը:
- Ծառայությունները պետք է կատարվեն ՀՀ կառավարության աշխատակազմի վարչական շենքում՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն-1 հասցեում:
- Կատարողը պարտավոր է Պատվիրատուի կողմից տրամադրված նյութերը կազմել դրանք ստանալու օրվանից հաշված.

ա) 1-ին չափաբաժնի համար - մեկ աշխատանքային օրվա ընթացքում առնվազն 4 գործ,

բ) 2-րդ չափաբաժնի համար - մեկ աշխատանքային օրվա ընթացքում առնվազն 40 գործ:

- Ծառայությունների դիմաց վճարումը՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

**ՀՀ կառավարության աշխատակազմ**